

Պէյր Ճալա. — Ռաքէլի գերեզմանէն անդին ճանապարհը երեք ճիւղերու կը բաժնուի. մին կը շարունակուի ուղղակի դէպի Քերրոն, միւսը առջեւ կը դառնայ Պէյր Ճալա որ երկրին կարևորագոյն քաղաքներէն մին է և բոլորովին քրիստոնեայ տեղ մը: Հոն յունաց Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ մինչև հիմակ ցոյց կը տրուի Ս. Կուսի աւանդական քարէ աթոռը որ պահուած էր Քաթիզմայի եկեղեցիին մէջ (P. E. F. 1902, էջ 237-40): Այս աթոռը շինուած էր մեղզի կարմիր քարէն որ Քաթիզմայի մօտերը կը գտնուէր, անկէ կարած են և անոր վրայ Ս. Կոյսը հանգըստացած էր երբ Բեթղեհէմ ճամբորդած էր: Թէոզոսի կողմէ պատմուած Իւրպիկիոսի դրուագին մէկ օրինակն է ան (R. Bl. 1924, էջ 620):

Պէյթ Ճալա գիւղին մօտ են Պարոն Տէր կոչուած ձիթաստանը, այգին և հողերը, ուր տեղ տեղ երեւան ելած են քրիստոնէական վիմափոր գերեզմաններ և հին ջրհորներ, տապանաքարերու բեկորներ, ոմանք հայկական տառերով (Հ. Վ. Ե. էջ 12):

Բերդնիկ. — Անիկա, տուն հացի, նախապէս Եփրարա անունը կը կրէր որ կը նշանակէ շի պողոտի, պէյր յան, ասորերէն, երկրին լեզուն, նմանապէս կը նշա-

դուար է բացատրել: Ե. դարուն Մոպսեսացի եպիսկոպոս մը՝ Օգսեսիոս ի պաշիւ անոնց եկեղեցի մը շինեց իր եպիսկոպոսական ֆաղափն պարիպներէն դուրս: Անաբաբա անոր մասուններ տուա: 485 Մայիս 7 ին Երուսղէմի Մարտիրոս եպիսկոպոսը Ս. Եսթիմիոսի վանքի սեղանին սակ զեեղեց այս երեք վկաներուն նշարներ: Սեւերիանոս Անիոպացիէն կը մնայ 515 ին ներքոյն մը ի պաշիւ անոնց (O. C. M. էջ 194-195): Բայց մեզ անձանօք կը մնայ թէ ո՞վ փոխադրած է անոնց նշարները Ռաբէլի գերեզմանին մէջ: